

**Տարածաշրջանայնացում, տարածաշրջանայնություն, տարածաշրջանային ինտեգրում  
(հայեցակարգային մոտեցում)**

*Նարեկ Ս. Գալստյան*

*քաղաքական գիտությունների թեկնածու*

Համաշխարհայնացման և պետությանը դրա նետած մարտահրավերների իմաստավորման համատեքստում մասնագիտական շրջանակներում առանձնակի կարևորություն են ստացել տարածաշրջանային ինտեգրման և տարածաշրջանայնացման (ռեգիոնալացման) փոխկապակցությունների ու համադրման հարցերը՝ հիմք ընդունելով այն համոզմունքը, որ հենց այդ գործընթացներն են հանդիսանում խաղաղության և կայունության ապահովման ամենաարդյունավետ մեխանիզմները: Նշվածն առավել հրատապ և արդիական է հնչում Հարավային Կովկասի առումով, որտեղ, չնայած բազմաթիվ արտաքին դերակատարների ներգրավվածությանը (գուցե նաև հենց այդ պատճառով) և տարածաշրջանային համագործակցության զարգացման մի շարք ձևաչափերի առկայությանը, մինչ այժմ չի հաջողվել ապահովել տարածաշրջանային անվտանգության և կայունության, տեղի երկրների կայուն զարգացման արդյունավետ և համընդունելի համակարգ: Այս առումով հարկ է ընդգծել, որ տարածաշրջանայնացումը ենթադրում է ոչ միայն բավականին բարձր զարգացած տարածաշրջանային համագործակցություն, այլև լրացուցիչ խթաններ, առանց որոնց պետությունները շահագրգռված չեն լինի դուրս գալ տարածաշրջանային համագործակցության ավանդական ձևաչափերից և ներքաշվել առավել ջանքեր պահանջող տարածաշրջանայնացման գործընթացի մեջ:

Հիմնախնդրի հստակեցման համար նախևառաջ անհրաժեշտ է վերհանել տարաշաճը շրջանայնացման էությունն ու առանձնահատկությունները, հստակեցնել դրա առնչությունները փոխկապակցված մյուս երևույթների՝ տարածաշրջանայնության (ռեգիոնալիզմ) և տարածաշրջանային ինտեգրման հետ: Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են տարածաշրջանայնացման մի քանի տարատեսակներ, որոնցից յուրաքանչյուրի ուսումնասիրության ելակետը հանդիսանում է **«տարածաշրջան»** հասկացության սահմանումն է: Ընդհանուր մոտեցմամբ, տարածաշրջանը սահմանվում է որպես սահմանափակ թվով պետությունների խումբ, որոնք կապակցված են աշխարհագրական հարևանությամբ և բարձր աստիճանի հասնող փոխկապակցվածությամբ<sup>1</sup>: Աշխարհաքաղաքական կամ արտաքին քաղաքական

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, Butler F., Regionalism and Integration / in The Globalization of World Politics/ An introduction to International Relations/ Edited by John Baylis and Steve Smith/ Oxford University Press, 1998, P. 409-411:

Քաղաքագիտություն: Բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Եր. 2009թ., էջեր 77-93

ըմբռնմամբ, «տարածաշրջան» տերմինը վերաբերում է աշխարհաքաղաքական գոտուն՝ երկրների այն խմբին, որոնք մի շարք պատճառներով առավել կապված են միմյանց, քան այլ երկրների հետ: Աշխարհագրական մոտեցումը որպես հիմք ընդունում է ֆիզիկական միջավայրի միատարրությունը, իսկ վարչաիրավական մեկնաբանությամբ տարածաշրջանը հանդես է գալիս որպես վարչատարածքային միավոր: Մի շարք հեղինակներ էլ գտնում են, որ «տարածաշրջան» հասկացությունը բնութագրում է կոնկրետ պատմատարածքային սոցիո-բնաշխարհագրական ամբողջություն, որն օժտված է պաշարային (բնական և սոցիալական), տեխնոլոգիական և էթնոմշակութային ինքնաբավությամբ՝ ընդլայնված սոցիալական վերարտադրության համար: Որպես տարածաշրջան ձևավորող հիմնական գործոններ առանձնացվում են աշխարհագրական, տնտեսական, ժողովրդագրական և էներգետիկ գործոնները<sup>1</sup>:

Կարելի է առանձնացնել մի շարք հիմնային հատկանիշներ, որոնց համալիրի կամ մի մասի առկայությամբ պետությունների որոշակի ամբողջությունը կարող է բնութագրվել որպես տարածաշրջան: Այսպես, եթե աշխարհագրական տարածաշրջանի բնութագրման համար բավարար են բնաշխարհագրական պայմանների միատարրությունը, ապա աշխարհաքաղաքական տարածաշրջանը պետք է բավարարի նաև այնպիսի հիմնապայմանների, ինչպիսիք են այդ տարածության վրա բնակվող մարդկային հանրույթների պատմամշակութային ընդհանրությունները, այդ հանրույթների միջև սոցիալ-տնտեսական և քաղաքական փոխազդեցության որոշակի բարձր մակարդակը: Այսպիսի բնութագրումը ենթադրում է, որ պետությունների համախումբը կարող է համարվել տարածաշրջան այս կամ այն չափով, այսինքն՝ այդ համախումբը կարող է բավարարել նաև նշված պայմանների մի մասին, ինչի հիման վրա էլ որոշ հեղինակներ առանձնացնում են տարածաշրջանի մի քանի չափումներ.

- Տարածաշրջանը՝ որպես բնականորեն սահմանազատված աշխարհագրական միավոր («*նախատարածաշրջան*»), որը չունի կազմակերպական ամրագրում տարածաշրջանային կազմակերպությունների տեսքով:
- Տարածաշրջանը՝ որպես սոցիալական համակարգ («*պարզունակ տարածաշրջան*»), ինչը ենթադրում է այն բնակեցնող մարդկային հանրույթների միջև անվտանգության համալիր կազմող սոցիալական փոխազդեցության որոշակի մակարդակ, որի շրջանակներում մաս կազմող հանրույթների անվտանգությունը փոխկապակցված ու փոխկախված է միմյանցից և տարածաշրջանային համակարգից<sup>•</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Կարдонова И.А. Глобальная регионализация как предмет научного познания, М. 2006, с. 118:

• «Ուժային հավասարակշռության» տարածաշրջանային բավական պարզունակ այս կարգը բնութագրական էր Եվրոպային 19-րդ դարում:

- Տարածաշրջանը՝ որպես տարածաշրջանային կառույցի շրջանակներում տնտեսական, քաղաքական, ռազմական կամ մշակութային ոլորտներում կազմակերպված փոխգործակցող երկրների համախումբ (*«ճևային տարածաշրջան»*):
- Տարածաշրջանը՝ որպես քաղաքացիական հասարակություն, երբ կազմակերպական ամրագրումը դյուրացնում, խթանում է հանրույթների միջև սոցիալական փոխազդեցությունները և դիրքորոշումների համաձայնեցումը (*«տարածաշրջանային անիշխանական ընկերակցություն»*), որն ավելին է, քան անիշխանությունը, բայց պակաս է, քան ընկերակցությունը), որտեղ առաջնային նշանակություն է տրվում մշակութային ընդհանրություններին:
- Տարածաշրջանը՝ որպես *սուբյեկտ*՝ օժտված ինքնությամբ, գործառնական հատկանիշներով և որոշումների ընդունման համակարգով, որի հիմքում ընկած են տարածաշրջանային անվտանգության և տնտեսական բարգավաճման խնդիրները: Ըստ որում, այս գործընթացի վերջնական արդյունքը կարող է դառնալ *«տարածաշրջանային պետության»* կազմավորումը, որը տարածաշրջանային առումով նման կլինի կայսրության, իսկ քաղաքական կարգի առումով՝ իրենից կներկայացնի հանուն անվտանգության և բարեկեցության առավելագույն մակարդակի ձեռքբերման վերազգային կազմավորման մեջ կամավոր ընդգրկված պետական կազմավորումների խումբ<sup>1</sup>:

Ըստ այդմ և կենտրոն-ժայռամաս փոխազդեցության բնույթով տարբերակվում են նաև տարածաշրջանների երեք կառուցվածքային տիպեր.

- *Ակտիվ գոտիներ*, որոնք բնութագրվում են քաղաքական կայունությամբ և տնտեսական զարգացման շարժընթացով: Պետությունների այդպիսի խմբավորման ձևավորման հիմքը համաշխարհային գործընթացներում ազդեցիկ դերակատարություն ունենալու ընդհանուր ձգտումն է: Այս տիպի տարածաշրջաններ են համարվում Արևմտյան Եվրոպան, Հյուսիսային Ամերիկան և Արևելյան Ասիան, որոնցից առաջինն, ի տարբերություն մյուսների, առանձնանում է ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական ակտիվությամբ՝ հանձինս Եվրոպական Միության տեսքով տարածաշրջանային քաղաքական կարգի ձևավորման:
- *Միջանկյալ տարածաշրջանները* սերտորեն փոխկապակցված են ակտիվ գոտիների հետ և կարող են ներառվել դրանցում՝ քաղաքական կայունության և տնտեսական զարգացվածության չափանիշներին համապատասխանելու դեպքում: Հենց այդ ձգտումն է համախմբում այս տարածաշրջանների (Կենտրոնական Եվրոպա,

<sup>1</sup> St'u Globalism and Regionalism, Selected Papers Delivered at the UN University, Edited by T. Tanaka and T. Inoguchi, Global Seminar '96 Shonan Session, 2-6 September 1996, Hayama, Japan.

Քաղաքագիտություն: Բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Եր. 2009թ., էջեր 77-93  
Լատինական Ամերիկա և Կարիբյան ծովի ավազան, Հարավ-Արևելյան Ասիա, Օվկիանիա) մաս կազմող երկրներին:

- *Ծայրամասային տարածաշրջանները* (հետխորհրդային տարածությունը, Բալկանները, Մերձավոր Արևելքը, Հարավային Ասիան և Աֆրիկան) աչքի են ընկնում քաղաքական անկայունությամբ, հակամարտայնությամբ և տնտեսական զարգացվածության ցածր մակարդակով, որի շրջանակներում երկրներին համախմբողը սահմանայնացման (մարզինալացման) գործընթացի կասեցումն է: Այդ իրադրությունը տեղի երկրների համար առավել հրատապ է դարձնում անվտանգության և կայունության, քան տնտեսական զարգացման խնդիրները: Իրավիճակից արդյունավետ ելքը համարվում է տարածաշրջանայնացումը, այլապես նրանք մշտապես կլինեն ակտիվ գոտիների ներազդեցության տակ, որոնք մշտապես կգործիքայնացնեն առկա ներտարածաշրջանային հակասությունները<sup>1</sup>:

Տարածաշրջանի սահմանմանը համարժեք տարբեր կերպ է մեկնաբանվում նաև **տարածաշրջանայնացումը**: Այսպես, վարչատարածքային մոտեցմամբ (միկրոմակարդակ), տարածաշրջանայնացումը ներկայացվում է որպես պետության շրջանակներում տարածքային միավորների տնտեսական կամ քաղաքական ինքնակերպության զարգացման, մշակութային ինքնավարության, իսկ երբեմն՝ անջատողականության ձգտում: Մեզոմակարդակում տարածաշրջանայնացումն արտահայտվում է մեկ ամբողջության մեջ (որը ԵՄ-ի դեպքում ունի վերագային բնույթ) տարբեր պետությունների մաս կազմող տարածքների ինտեգրմամբ: Իսկ մակրոմակարդակում, որոշ հեղինակների համոզմամբ, այն արտահայտվում է, մի կողմից, արտաքին ներխուժումից պաշտպանվելու՝ լոկալ քաղաքակրթությունների ձգտմամբ, որը, Ս. Հանթինգթոնի բնորոշմամբ, կարող է հանգեցնել «քաղաքակրթությունների բախման», իսկ մյուս կողմից, նրանով, որ համաշխարհայնացման հիմնական խթանողներ հանդիսացող հետարդյունաբերական երկրներն իրենք են որդեգրում տարածաշրջանայնացման կուրս՝ ձևավորելով ներփակված և ինքնաբավ համակարգեր<sup>2</sup>:

Տարածաշրջանայնացման գործընթացները բացատրվում են մի շարք գործոնների ազդեցությամբ, ինչպիսիք են.

- համաշխարհային գործընթացները՝ համաշխարհային քաղաքականության համաշխարհային և տարածաշրջանային բաղկացուցիչների հարաբերակցությունը, այն է՝ տարածաշրջանայնացման աճող ազդեցությունը միջազգային հարաբերությունների համակարգի վրա,

<sup>1</sup> Տե՛ս Globalism and Regionalism, նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս, մասնավորապես, Кардонова И.А. նույն տեղում, с. 117:

- աշխարհաքաղաքական գործոնները, նախևառաջ՝ աշխարհաքաղաքական տարածաշրջանի աշխարհագրական տեղադրությունը, առկա բնական պաշարներն ու դրանց տեղաբաշխումը, ենթակառուցվածքային համակարգերը, տարածաշրջանի պատմությունը, որոնց զուգորդումից էլ կախված են տարածաշրջանի ձևավորման նախադրյալներն ու արագությունը,
- տնտեսական գործոնները՝ նկատի ունենալով, որ տնտեսական համագործակցությունը կարևոր դեր է խաղում սահմանամերձ պետությունների և տարածաշրջանների մերձեցման գործում,
- կրոնամշակութային գործոնները, որոնց շրջանակներում կարևորվում է տարածաշրջանի ժողովուրդների կրոնամշակութային ընդհանրությունը, ինչը լրացուցիչ խթան է տարածաշրջանի համախմբման համար,
- արդի իրողություններին այլևս չհամապատասխանող ժամանակակից պետության ինստիտուտի ճգնաժամը՝ երկարաժամկետ հեռանկարում, ներկայիս միտումների պահպանման դեպքում, կանխատեսելով ավանդական ազգային պետության վերացում, որն իր տեղը կգիջի տարածաշրջաններին և վերազգային ինստիտուտներին<sup>1</sup>:

Տարածաշրջանայնացման խնդիրները գիտավերլուծական շրջանակներում սկսել են արժևորվել Երկրորդ աշխարհամարտից հետո, իսկ դրանց ուսումնասիրությունները լայն թափ են ստացել համաշխարհայնացման զարգացմանը զուգահեռ, հատկապես, 20-րդ դարի վերջերին: Տարածաշրջանայնացման ակունքները կարելի է տեսնել դեռևս համաշխարհայնացմանը նախորդած տարածաշրջանային մակարդակում հանրային հարաբերությունների ինտենսիվ միջազգայնացման շրջանում: Ներկայումս տարածաշրջանայնացումն արտահայտվում է տարածաշրջանի մասշտաբով միջպետական-ազգամիջյան փոխգործակցության տեղայնացման, որոշակիորեն ինքնաբավ տնտեսաքաղաքական կազմավորումների, տեղի ժողովուրդների մոտ տարածաշրջանային ինքնության կամ դրա հիմնատարների ձևավորման տեսքով՝ այդպեսով փոփոխելով աշխարհի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական համապատկերը:

Եվ չնայած տարածաշրջանայնացման հայեցակարգը դեռևս գտնվում է ձևավորման փուլում, դրա աշխարհագրական չափորոշիչներն արդեն մեծամասամբ հստակեցված են վերը հիշատակված ակտիվ գոտիների առաջնային դերակատարների կողմից: Այսպես, ԱՄՆ-ն առաջնահերթ ուշադրություն են հատկացնում Լատինական Ամերիկային՝ զուգահեռաբար մեծ հետաքրքրություն ցուցաբերելով Ասիա-

<sup>1</sup> Տե՛ս Ի. Բուսյգինա Ի. Մ., Концептуальные основы европейского регионализма. Западная Европа // Европа: вчера, сегодня, завтра / Институт Европы РАН; ред. кол. РАН: Н. П. Шмелев (пред.) и др., отв. ред. Н. П. Шмелев. – М. 2002, с. 395-397:

Քաղաքագիտություն: Բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Եր. 2009թ., էջեր 77-93

խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի նկատմամբ, Ճապոնիան՝ Հարավային և Հարավ-Արևելյան Ասիային, ԵՄ-ը՝ Կենտրոնաարևելյան Եվրոպային՝ որոշակի հետաքրքրություն ցուցաբերելով նաև աֆրիկյան մի շարք երկրների նկատմամբ: Ակնհայտ է, որ ջանքերի կենտրոնացումը կոնկրետ ուղղություններով արդեն ինքնին թույլ է տալիս այդ կենտրոններին ստեղծել ուժերի լուրջ գերակայություն, ինչը նրանց համար ապահովում է քաղաքական և տնտեսական ազդեցության ամրապնդում: Այսինքն, տարածաշրջանայնացման քաղաքականության էությունը հանգում է ուժային կենտրոնների կողմից առանձին տարածաշրջաններում ռազմավարական և մարտավարական խնդիրների լուծմանն ուղղված ջանքերի կոնտրոնացմանը՝ նպատակ ունենալով այդ տարածաշրջանները հեռանկարում ներառել իրենց «պահուստի» մեջ:

Բնականաբար տարածաշրջանայնացվածության աստիճանը կարող է փոփոխվել՝ կախված համաշխարհային և տեղական-ազգային գործոնների ազդեցության տակ գտնվող տարածաշրջանային զարգացումների շարժընթացից: Այն, ըստ էության, իրենից ներկայացնում է կոնկրետ տարածաշրջանի շրջանակներում մշակույթի, անվտանգության, տնտեսության և քաղաքականության ամենատարբեր ոլորտներում բազմազանության վերաձևման գործընթաց, որի նպատակն առավելագույն միատարրության ձեռքբերումն է նշված ոլորտներում, ինչը ձեռք է բերվում բնականոն զարգացման, քաղաքական միջամտության կամ, ինչն առավել հավանական է, այդ երկուսի միախառնման միջոցով: Սակայն հարկ է նշել, որ վերափոխումները մշակութային ոլորտում, ի տարբերություն մյուսների, բավական շատ ժամանակ են պահանջում և առավել հավանական հող են հանդիսանում հասարակությունների ներսում հակադարձ շարժման սկզբնավորման համար: Այս խնդիրն առավել դյուրին է հաղթահարել այն տարածաշրջաններում, որի մաս կազմող հանրույթները ոչ միայն միևնույն քաղաքակրթության, այլև պատմաքաղաքական ընդհանուր ժառանգության կրողներն են, իսկ նրանց միջև փոխազդեցությունն աչքի չի ընկել ազգամիջյան հանդուրժողականության սահմանը գերազանցած հակամարտություններով: Թերևս հենց այս մտահոգությունն է պատճառը, որ մինչ այժմ տարածաշրջանայնացման գործընթացների գլխավոր խթանը եղել են անվտանգության հարցերը: Քաղաքականության ոլորտում այսօր այդ գործընթացներին բնորոշ է քաղաքական վարչակարգերի ժողովրդավարացումը, իսկ տնտեսության ոլորտում՝ առևտրային ռեժիմի ազատականացումը:

Տարածաշրջանայնացման խթանիչ գործոններ կարելի է տեսնել նաև համաշխարհային մասշտաբով: Օրինակ, համաշխարհային համակարգի վերափոխվող կառուցվածքն ինքն է ապահովում շարժընթացի լայն հնարավորություններ տարածաշրջանային դերակատարների համար, քանզի տարածաշրջանայնացումն ինքը

Քաղաքագիտություն: Բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Եր. 2009թ., էջեր 77-93  
հանդիսանում է աշխարհակարգի բազմաբևեռայնացման բաղադրատարրերից մեկը:  
Նշանակալի է նաև «դոմինոյի էֆեկտը», երբ, օրինակ, եվրոպական  
տարածաշրջանայնացումն այսօր դարձել է այլ տարածաշրջաններում համանման  
գործընթացների զարգացման ուղենիշ:

Տարածաշրջաններն իրենք հանդես են գալիս նաև որպես նրա մաս կազմող  
պետությունների շահերի հարաբերակցության թատերաբեմ, իսկ երբ առկա է ընդհանուր  
շահերի կամ շահերի ընդհանրության գերակայություն, ապա կարելի է խոսել  
կազմավորման փուլում գտնվող տարածաշրջանային դերակատարի մասին: Սակայն  
այստեղ հարկ է նշել, որ, որպես կանոն, տարածաշրջանը բավական դանդաղ է վերածվում  
դերակատարի անգամ իր սեփական սահմաններում, իսկ պետություններին առավել  
բնորոշ է այն՝ որպես իրենց շահերի մրցակցության թատերաբեմ դիտարկելը: Այս  
իրադրությունը կարող է արմատապես փոփոխվել միայն այն դեպքում, երբ այդ շահերը  
ձևակերպող և արտահայտող տարատեսակ խմբերն առավել նպատակահարմար  
համարեն գործառնությունը վերագրելին-տարածաշրջանային, քան ազգային-պետական  
մակարդակում:

Տարածաշրջանայնացման կարևորագույն հիմնատարրերից մեկը  
մերձասահմանային համագործակցությունն է, որը, որպես տնտեսաքաղաքական  
ինքնավարացմանն ուղղված ռազմավարություն, ներկայումս լայնորեն կիրառվում է ԵՄ-ի  
շրջանակներում: Դրա արտահայտությունն այսպես կոչված «եվրոպական  
տարածաշրջաններն»<sup>\*</sup> են, որոնք հանդես են գալիս որպես համագործակցության  
շարունակականության և ռազմավարական ուղղորդման միջոց: Այս համատեքստում  
անդրսահմանային տարածաշրջանայնությունը բնորոշվում է որպես քաղաքական  
համագործակցության և խնդիրների լուծման տարածականորեն ինտեգրված ձև, որը դուրս  
է գալիս ազգային վարչական սահմաններից և ձգտում ձևավորել փոխկապվածության,  
փոխկախվածության և շահերի ընդհանրության գիտակցում: Ինչպես գտնում են որոշ  
հեղինակներ, այն ավելին է, քան տնտեսական գործունեության կամ խոշորացող  
շուկաների տարածքային նոր տրամաբանությանը պարզ արձագանքը, այն նաև  
փոխկախվածության, պետությունների ու միջազգային կազմակերպությունների՝ գլոբալ  
հարցեր դիտարկելու սահմանափակ ունակության հետևանք է<sup>1</sup>: Հատկանշական է, որ  
ժամանակակից ԵՄ-ն անդրսահմանային համագործակցության ձևաչափը կիրառում է ոչ  
միայն հին անդամ-երկրների, այլև դրանց ու Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի նոր

\* Առաջին անգամ եվրոպական տարածաշրջանի հայեցակարգն իրագործվել է 1970-1980-ական թթ.  
գերմանա-հոլանդական սահմանի վրա գտնվող մի տարածքում, որն աչքի էր ընկնում անդրսահմանային  
պլանավորման և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում «ինստիտուցիոնալ խտությամբ»:

<sup>1</sup> St' u Young O. (ed.) Global Governance. Drawing Insights from the Environmental Experience, Cambridge  
(Mass.), London, 1997, pp.273-299.

Քաղաքագիտություն: Բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Եր. 2009թ., էջեր 77-93  
անդամների, անդամության թեկնածուների միջև փոխգործակցությունը խորացնելու  
համար՝ տարածաշրջանային տարբերությունները մեղմելու և համագործակցության  
երկարաժամկետ հիմքերի ստեղծման նպատակով՝ որպես ինտեգրման  
նախապատրաստման քաղաքականություն:

Այսպիսով, տարածաշրջանայնացումը տնտեսաքաղաքական գործընթաց և  
նախագիծ է, որը տարբերվում է տարածաշրջանայնությունից նրանով, որ առաջինն  
իրենից ներկայացնում է տարածաշրջանի «կառուցման» գործընթաց:  
Տարածաշրջանայնությունը տարածքային հանրույթների սոցիոմշակութային և  
քաղաքական ինքնանույնացման ձև է, որն արտահայտվում է տարբեր գաղափարներում,  
գործողություններում՝ ուղղված պետությունների համակարգում տարածաշրջանի  
ինքնակերպության պահպանմանը կամ նրա կարգավիճակի բարձրացմանը: Ինչպես և  
«տարածաշրջան» ու «տարածաշրջանայնացում» հասկացությունները,  
«տարածաշրջանայնությունը» ևս ունի իր վարչատարածքային և արտաքին-քաղաքական  
կամ աշխարհաքաղաքական մեկնաբանությունները, որոնց բոլորի հիմքում, սակայն,  
ընկած է ցուցանիշների գրեթե նույնական համակարգը՝ էթնոմշակութային խմբերի  
սոցիալական համախմբվածությունը, դրանց ինքնությունների համատեղելիությունը՝  
պատմամշակութային ժառանգության ընդհանրությունը և քաղաքական  
համերաշխությունը, տվյալ տարածքում գործառնող տնտեսվարման միավորների  
տնտեսական փոխլրացնողականությունը:

**Տարածաշրջանայնությունը** որպես ինտելեկտուալ և քաղաքական շարժում ի  
հայտ է եկել 19-րդ դ. երկրորդ կեսին Եվրոպայում՝ որպես հակադրություն հասարակական  
կյանքի միասնացման և կենտրոնացման միտումներին: Այս շարժման ներկայացուցիչները  
ելնում էին այն պատկերացումից, որ տեղական իշխանության կառուցվածքների  
զարգացման աղբյուրը պետք է դառնան առկա պատմամշակութային ավանդույթները,  
որոնց հիման վրա էլ հնարավոր կլինի ամրապնդել ծայրամասերի դերը քաղաքական  
կյանքում\*:

Այս ֆենոմենի ուսումնասիրություններն այսօր դեռևս համակարգված չեն մեկ  
միասնական գիտաճյուղի մեջ, հետևաբար, տեղին է խոսել, ավելի շուտ,  
միջգիտակարգային մոտեցում պահանջող հայեցակարգային համակարգի մասին, որը  
բնորոշվում է գիտական մեկնաբանությունների բազմազանությամբ: Այսպես, ռեալիզմը,  
միջազգային համակարգը համարելով ի սկզբանե անիշխանական, որում առաջնահերթ

---

\* Այս մոտեցումն իր ամրագրումն ստացավ 1990թ. հիմնադրված Տարածաշրջանայնության ֆրանսիական  
դաշնության գործունեության մեջ: Հատկանշական է, որ, օրինակ, Իտալիայում և Գերմանիայում  
տարածաշրջանայնության գաղափարները նպաստել են դրանց կազմի մեջ մտնող մարզերի ու հողերի  
ինքնակերպության և առանձնահատկությունների պահպանմանը, իսկ Ռեչ Պոսպոլիտայում  
տարածաշրջանայնությունը պատմականորեն հանդես է եկել որպես հզոր հարևանների հետ  
հարաբերություններում ազգային ինքնագիտակցության և միասնության արտահայտչաձև:



նշանակություն ունեն պետությունների եսասիրական շահերը, տարածաշրջանայնությունը դիտարկվում է կա՛մ որպես ինչ-որ մի ուժային կենտրոնի աշխարհաքաղաքական դիրքերի ամրապնդման անհրաժեշտության («կայսերական վարկած»), կա՛մ որպես մրցակից տերությունների ազդեցության հավասարակշռման փորձերի («ուժերի հավասարակշռության վարկած»), կա՛մ որպես ընդհանուր տնտեսական շահերի պաշտպանության համար հավաքական հարաբերությունների համակարգի ստեղծման («գերիշխանական կայունության վարկած») հետևանք: Ինստիտուցիոնալիստները գտնում են, որ վերը նշված անիշխանությունը կարող է հաղթահարվել տարածաշրջանային տարատեսակ խմբավորումների և դաշինքների կադապար հանդիսացող ուժեր ու արդյունավետ ինստիտուտների միջոցով: Նրանք հակված են անդրազգային տարածաշրջանների ձևավորումը մեկնաբանել մասնակից-երկրների ներսում իշխանության տարբեր մակարդակների միջև ընթացող գործընթացներով: Իսկ ահա հետմոդեռնիստական մոտեցման շրջանակներում տարածաշրջանայնացումը դիտարկվում է որպես ինքնության և տարածքային ընդհանրության մասին ներկայումս գերիշխող պետկերացումներից բխող սոցիալական վարանամտության ձև:

Ավելին, մի շարք հեղինակներ իրավամբ տարբերում են տարածաշրջանայնության «հին» և «նոր» ընկալումները՝ որպես հիմք ընդունելով հետևյալ տարբերիչ հատկանիշները.

- Հին տարածաշրջանայնությունը ձևավորվել է «սառը պատերազմի» երկբևեռ, իսկ նորը՝ սառը պատերազմի ավարտից հետո ձևավորված բազմաբևեռ աշխարհակարգի տրամաբանության համատեքստում, որոնցից առաջինի պայմաններում «կեղծ-տարածաշրջանները» հակված էին վերարտադրելու երկբևեռայնությունն իրենց շրջանակներում:
- Եթե հին տարածաշրջանայնությունը ձևավորվել է «վերևից»՝ հաճախ գերտերությունների արտաքին միջամտությամբ, ապա նորն իրենից ներկայացնում է տարածաշրջանների ներսում անմիջական գործընթացների արդյունք, երբ մասնակից-երկրները համընդհանուր մարտահրավերներին դիմակայելու համար զգում են փոխգործակցության խորացման անհրաժեշտություն:
- Եթե հին տարածաշրջանայնությունն ուղղված էր դեպի ներս և նպաստում էր տնտեսական պրոտեկցիոնիզմի ի հայտ գալուն, ապա նորն առավել «բաց» է և համատեղելի փոխկապակցված համաշխարհային տնտեսության հետ, ինչը, սակայն, չի բացառում տարածաշրջանային տնտեսական ռեժիմի ձևավորումը:
- Հին տարածաշրջանայնության նպատակներն առավել միակողմանի և հստակ էին (անվտանգություն, կայունություն և այլն), իսկ նորը ներառում է բազմաչափ

Քաղաքագիտություն: Բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Եր. 2009թ., էջեր 77-93  
նպատակների համալիր (նաև սոցիալ-տնտեսական զարգացում, շրջակա միջավայր և  
այլն):

- Եթե հին տարածաշրջանայնությունը կենտրոնացած էր միջպետական հարաբերությունների վրա, ապա նորը դարձել է համաշխարհային կառուցվածքային փոխակերպման մաս, որում ոչ կառավարական դերակատարները ևս ունեն ազդեցիկ դերակատարում<sup>1</sup>:

Նոր տարածաշրջանայնությունը չի սահմանափակվում ազատ առևտրով և ունի տնտեսական, քաղաքական, սոցիալական և մշակութային չափումներ, որի համատեքստում առաջնային նշանակություն են ստանում տարածաշրջանային ինքնության և միասնականության հարցերը: Նոր տարածաշրջանայնությունը չի կարելի դիտարկել համաշխարհայնացումից անկախ, քանզի արդի համաշխարհային կարգը բնութագրվում է տարբեր տարածաշրջաններին ներհատուկ առանձնահատկություններից զուգահեռ տարածաշրջանայնացման զարգացման ընդհանրական օրինաչափություններով:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են տարածաշրջանայնության «կոշտ» և «փափուկ» տիպեր, որոնցից առաջինի դեպքում նախաձեռնությունն ունի «վերից վար» ուղղվածություն, այսինքն՝ նախաձեռնողի դերում հանդես է գալիս պետությունը: Փոխգործակցությունն այս դեպքում ունի ինստիտուտացված-ձևայնացված բնույթ և բնութագրվում է հստակ (իշխանական) աստիճանակարգության առկայությամբ՝ հիմնված վարչական և դիվանագիտական գերատեսչությունների որոշիչ ազդեցության վրա, որոնք հստակորեն առաջնորդվում են պետական շահի մասին ռեալիստական պատկերացումներով: Այս ձևաչափի շրջանակներում «խոշոր» պետությունները գերակայում են «փոքրերի» նկատմամբ, հանդես գալիս ազգային-պետական ինքնիշխանության պահպանման, ազգային-պետական սահմանների ամրապնդման դիրքերից:

«Փափուկ» տարածաշրջանայնությունը ձևավորվում է «վարից վեր»՝ շարժընթացի լայն հնարավորություններ ապահովելով հորիզոնական, ապակենտրոնացված աստիճանակարգության մակարդակում փոխգործակցող սուբյեկտների ինքնավարության և բազմազանության համար: Այս դեպքում գերիշխող է «բաց աշխարհագրությունը»՝ հիմնված ոչ այնքան տարածքային մերձության, որքան ընդհանուր ինքնության ձևավորման վրա: Ըստ որում, առաջնային դերակատարումն այստեղ վերապահված է ոչ կառավարական և/կամ ենթաազգային ինստիտուտներին, որոնց միջև ինտեգրումը կառուցված է ցանցային հայեցակարգի վրա: Այստեղ փոխգործակցությունը համատեքստային է, առավել ճկուն և պակաս ձևայնացված: Այսպիսի ընկալումը

<sup>1</sup> Տես, մասնավորապես, Globalism and Regionalism, նույն տեղում:

Քաղաքագիտություն: Բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Եր. 2009թ., էջեր 77-93

ներառում է կոզնիտիվիզմի և ինստիտուցիոնալիզմի բազմաթիվ մոտեցումներ՝ ենթադրելով, մասնավորապես, որ «կոզնիտիվ» (ճանաչողական, իմացական) կապիտալն էականորեն ազդում է տարածաշրջանի ինստիտուցիոնալ կառուցվածքի ձևավորման վրա, այսինքն՝ մի կողմից՝ գաղափարների բացակայության դեպքում ինստիտուտներն ուղղակի չէին կարող ձևավորվել, իսկ մյուս կողմից, գաղափարների ազդեցությունը որոշումների ընդունման ոլորտի վրա կարող է ամրապնդվել արդյունավետ ինստիտուտների միջոցով<sup>1</sup>:

Ամբողջացնելով վերն ասվածը՝ կարող ենք առանձնացնել տարածաշրջանայնության մի քանի տարատեսակներ, ինչի համար որպես հիմք կարող են ծառայել թե՛ սոցիալ-տնտեսական փոխկապվածության, փոխկախվածության աստիճանը, թե՛ պատմաքաղաքական և սոցիոմշակութային արժեքների, ժառանգության ընդհանրության աստիճանը, թե՛ փոխգործակցության ձևայնացվածության, ինստիտուտացման աստիճանը, թե՛ արտաքին քաղաքականության հարցերում տարածաշրջանային խմբավորման ինքնուրույնության և միասնականության աստիճանը: Եթե մի դեպքում առաջնային դերակատարներ կարող են հանդիսանալ պետությունները, ապա մյուսներում՝ ոչ կառավարական խմբերը, եթե մի դեպքում առաջնահերթ նշանակություն ունեն տնտեսական, ապա մյուսում՝ անվտանգության և կայունության կամ մշակութային հարցերը: Ըստ այդմ, կարելի կլինի տարբերակել տնտեսական, սոցիալական և քաղաքական փոխկապվածության, ոչ կառավարական դերակատարների ակտիվության հիման վրա ձևավորված տարածաշրջանայնությունը, տարածաշրջանային փոխըմբռնման, համերաշխության և ինքնության վրա հիմնված տարածաշրջանայնությունը, երբ պատմամշակութային արժեքների միախառնումը հանգեցնում է առանձնահատուկ ընկերակցությանը պատկանելության «ընդհանուր զգացման» առաջացման, միջպետական տարածաշրջանային համագործակցության վրա խարսխված տարածաշրջանայնությունը, որի շրջանակներում կնքված միջպետական համաձայնություններն ուղղված են ընդհանուր խնդիրների լուծմանն ու պետությունների դերի ամրապնդմանը, պետությունների կողմից խթանվող և տարածաշրջանայնության ամենատարածված, զարգացած ձև հանդիսացող տարածաշրջանային տնտեսական ինտեգրումը, որի շրջանակներում կառավարական և գործարար շրջանակները հետապնդում են տնտեսական զարգացման նպատակներ, ինչպես նաև տարածաշրջանային միությունը, որի շրջանակներում նախորդների հատկանիշների համակցումը կարող է հանգեցնել տնտեսաքաղաքական տեսանկյունից փոխկապակցված և ինտեգրված տարածաշրջանային միավորի ի հայտ գալուն, որը կարող է որոշիչ

<sup>1</sup> Տարածաշրջանայնության տեսական-հայեցակարգային իմաստավորման մասին առավել հանգամանորեն տես Сергунин А.А. Проблемы и возможности регионалистики // Полис, № 5, 1994; Комаров М.П. Инфраструктура регионов мира: Учебник. СПб, 2000; Лебедева Э. В. Национальный вопрос и федерализм // Мировая экономика и международные отношения, № 7, 1998.

Քաղաքագիտություն: Բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Եր. 2009թ., էջեր 77-93  
ազդեցություն ունենալ ինչպես ներտարածաշրջանային, այնպես էլ համաշխարհային  
գործընթացներում:

Խոսելով տարածաշրջանայնացման և **տարածաշրջանային ինտեգրման**  
փոխկախվածության ու փոխկապվածության մասին՝ հարկ է նշել, որ  
տարածաշրջանային ինտեգրումը չի ենթադրում պարզապես պետությունների  
աշխարհագրական հարևանություն և տնտեսական փոխկապվածության բարձր  
աստիճան: Այդ գործընթացի ապահովման ու խթանման համար կարևոր են նաև մի շարք  
այլ գործոններ, ինչպիսիք են պատմական ընդհանուր ժառանգությունը,  
ռազմատնտեսական հզորության և ռեսուրսների համարժեք բաշխվածությունը  
տարածաշրջանային խմբավորման շրջանակներում և դրանցից դուրս, ազգային  
ավանդույթները, ինչպես նաև ինտեգրվող սուբյեկտների գաղափարաքաղաքական  
կողմնորոշումները:

Ավանդաբար տարածաշրջանային ինտեգրումն ընկալվում է որպես մասնակից-  
երկրների առևտրային քաղաքականության առավելագույն համաձայնեցում, որը  
հանգեցնում է նրանց միջև տնտեսական ինտեգրման, որի հնարավոր հեռանկարային  
արդյունքը համարվում է քաղաքական ինտեգրումը: Ինտեգրման գործընթացների  
ակտիվացման առաջամարտիկն իրավամբ համարվում է (Արևմտյան) Եվրոպան, որտեղ,  
չնայած վաղուց ի վեր դրան նպաստող, խթանող գործոնների (օրինակ,  
սոցիոմշակութային, պատմաքաղաքական ընդհանրությունների) առկայությանը, միայն  
20-րդ դ. երկրորդ կեսին, անհրաժեշտ հիմնապայմանների (օրինակ, ընդհանուր  
ներտարածաշրջանային և արտատարածաշրջանային (աշխարհա)տնտեսական ու  
աշխարհաքաղաքական մարտահրավերները, ժողովրդավարության և իրավական  
պետության ամրապնդումը, արմատական փոփոխությունների տնտեսվարման ոլորտում և  
այլն) ի հայտ գալուց հետո ինտեգրումը դարձավ իրականություն: Չարգացման գրեթե  
նույնական տրամաբանություն ունեն նաև Հյուսիսային Ամերիկայում ինտեգրացիոն  
միտումները: Սակայն հարկ է ընդգծել, որ «հայելու էֆեկտը», այսինքն,  
արևմտաեվրոպական և հյուսիսամերիկյան փորձի ամբողջական վերարտադրությունն այլ  
արժեքային կողմնորոշումներ, քաղաքական մշակույթ ունեցող տարածաշրջաններում չի  
տվել և չէր կարող տալ նույնական արդյունքներ: Ըստ որում, բոլորովին պարտադիր չէ, որ  
արևմտաեվրոպական իրականության մեջ իրենց արդյունավետությունն ապացուցած  
տնտեսական, քաղաքական և իրավական ինստիտուտները նույն կերպ դրսևորեն իրենց  
տարածաշրջանային այլ իրողություններում: Ավելին, չի կարելի բացառել, որ դրանք իրենց  
բովանդակությամբ հակասության մեջ մտնեն այդ փորձը փոխառելու հավակնություն  
ունեցող երկրների և/կամ տարածաշրջանների զարգացման տրամաբանության հետ,  
օրինակ, եթե արևմտաեվրոպական այդ ինստիտուտները հանդես են գալիս որպես

Քաղաքագիտություն: Բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Եր. 2009թ., էջեր 77-93

իշխանության և լիազորությունների ապակենտրոնացման մարմնավորումներ, ապա այլ երկրներում, ընդհակառակը, օրակարգային կարող է լինել միավորող իշխանության անհրաժեշտությունը: Բացի դրանից, ինչպես գտնում են մի շարք հեղինակներ, եվրոպական ինտեգրման գաղափարն ինքն էլ այսօր կարիք ունի կատարելագործման և հարստացման՝ բավական խորքային չլուծված խնդիրները հաղթահարելու նպատակով<sup>1</sup>: Եվրոպեիզմը՝ որպես դոկտրին և պատմական պրակտիկա, ունի անտիկ աղբյուրներ, ներառում է քրիստոնեության ավանդույթները և հեղափոխական-ժողովրդավարության, ազատական գաղափարախոսական տարբեր ուղղություններ: Պատմականորեն ապահիմտեգրման գործընթացներն ակնհայտորեն գերակայել են ինտեգրման գործընթացների նկատմամբ, ինչը Եվրոպան դարձրել է թշնամանքի և էթնոքաղաքական, դավանական հակամարտությունների ավանդական թատերաբեմ: Այսօր եվրոպական «ընդհանուր տան» կառուցման համատեքստում անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Եվրոպայի որոշ շրջաններ դեռևս անկայունության հավանական օջախներ են: Այս հանգամանքը վեր է հանում տարածաշրջանայնության մյուս՝ բացասական կողմը, որը բնութագրվում է անջատողական ձգտումներով և առկա պետական կառույցների բռնի քայքայմամբ:

Այդուհանդերձ, եվրոպական տարածաշրջանայնությունը չի հակասում եվրոպական ինտեգրմանը, այն նույնական չէ ապահիմտեգրման հետ, ավելին, քաղաքակրթական մոտեցմամբ կարող է անգամ հարստացնել «համաեվրոպական տան» հայեցակարգը: Ըստ որում, գոյություն ունի որոշակի դիալեկտիկական փոխկապակցություն ազգային և վերազգային մակարդակներում իշխանության ապակենտրոնացման միջև<sup>2</sup>, որը հենց եվրոպական ինտեգրման տարամաքանության մի մասն է: Երկու դեպքում էլ խնդիրը կենտրոնի և ծայրամասի միջև հավասարակշռության ապահովումն է:

Հատկանշական է, որ, ինչպես պնդում են մի շարք հեղինակներ, եվրոպական ինտեգրումը ենթադրում է շահերի ընկերակցության, բայց ոչ արժեքների ստեղծում՝ եվրոպական ժողովուրդների սոցիոմշակութային միասնացման առումով (հիշենք ԵՄ-ի կարգախոսներից մեկը՝ «միասնություն բազմազանության մեջ»): Այս իմաստով, եվրոպական ինտեգրման առջև այսօր կանգնած հիմնախնդիրներից մեկը դիտարկվում է ինտեգրման գործընթացներով պայմանավորված վերազգային և եվրոպական երկրների

<sup>1</sup> St' u Макарычев А. Гражданское общество и правовое государство, М. 1991, с. 53.

<sup>2</sup> Արևմտյան քաղաքագիտության մեջ կա նաև «ինտեգրալ դաշնայնություն» տերմինը, որի ակունքները գալիս են Պ.-Ժ. Պուրդոնի հասարակարգի հայեցակարգից, որը հետագայում զարգացրել են Ա. Դանդյեն, Ռ. Արոնը և Ա. Մարկը: Այն ներառում է հասարակությունների ներսում տարբեր խմբերի միջև քաղաքական իշխանության լիազորությունների և արտադրական պաշարների բաշխման ռացիոնալացմանն ուղղված կազմակերպական-կառուցվածքային սկզբունքների ամբողջությունը: Ըստ Макарычев А. Гражданское общество и правовое государство, М. 1991, с. 56:

Քաղաքագիտություն: Բուհական գիտամեթոդական նյութերի ժողովածու, Եր. 2009թ. , էջեր 77-93

զարգացման պատկերի տարբերակվածության արտահայտություն հանդիսացող տարածաշրջանային շահերի համակեցության ապահովումը, որի շրջանակներում կարևորվում է ընհանուր շահերի համակարգի և եվրոպական ժողովուրդների արժեհամակարգերի առավելագույն մերձեցումը՝ ենթադրելով, սակայն, որ դրանց միջև խզումը ընդհանրապես վերացնել հնարավոր չէ<sup>1</sup>: Մասամբ ընդունելով այդ պնդումը՝ հարկ է հավելել, որ հենց ինտեգրման և եվրոպական ժողովուրդների միջև փոխազդեցության ակտիվացման հիման վրա դրանց՝ այսօր արդեն ձևավորված ու զարգացող ընդհանուր արժեհամակարգն էլ հենց հանդիսանում է շահերի և արժեքային կողմնորոշումների «համերաշխության» արտահայտություններից մեկը:

Տարածաշրջանայնացման, տարածաշրջանայնության և տարածաշրջանային ինտեգրման փոխկապակցության առումով հարկ է նշել նաև, որ ներկայումս եվրոպական ինտեգրումն ու ԵՄ-ի անդամների կազմի ընդլայնումը նպաստում են սահմանամերձ տարածքների՝ որպես միջպետական փոխազդեցության գոտիների նկատմամբ ուշադրության աճին, ինչի արդյունքում ազգային շուկաները ներառվում են եվրոպական տնտեսական տարածության մեջ: Բնականաբար, ԵՄ-ի կողմից մերձսահմանային համագործակցությանն աջակցությունը պայմանավորված է բազմաթիվ ռազմավարական շահերով, ինչպիսիք են նոր շուկաների բացահայտումը, անվտանգության, քաղաքական կայունության և տնտեսական համախմբվածության շահերը, ընդգրկված տարածաշրջանների միջև մրցակցության անցանկալի հետևանքների չեզոքացումը:

---

<sup>1</sup> Տե՛ս Макарычев А. նույն տեղում, с. 56.